

ԵՐԿԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԵՒ ԵՌԱԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Երկրաբառը երկու ձայնաւոր կամ տուեալ լեզում ձայնաւորական (իմա՝ վանկարար) գործառոյթ իրականացնող հնչիւնների առկայութիւնն է մէկ վանկի կազմում: Համապատասխանաբար, եռաբարբառը երեք ձայնաւորի կամ ձայնաւորական գործառոյթով օժտուած հնչիւնն առկայութիւնն է մէկ վանկի կազմում: Դասագրքային այս հանրայայտ բնորոշումներից բխում են ոչ պակաս հանրայայտ դրոյթներ.

1. Երկբարբառի (եռաբարբառի) բաղադրիչները տուեալ լեզում առանձնաբար, այսինքն՝ իբրեւ հնչոյթ, ունեն ձայնաւորական (վանկարար) գործառոյթ:

2. Հանդէս գալով մէկ վանկի կազմում երկբարբառը (եռաբարբառը) գիտակցում է իբրեւ հնչարտաբերական ամբողջութիւն, որն ունի մէկ հնչոյթի գործառական արժէք: Այլ հարց է, թէ իւրաքանչիւր առանձին լեզուի դէպքում ինչպէս են մեկնաբաննում եւ կիրառում վերոյիշեալ սկզբունքները:

Առաջին կէտից հետեւում է, որ որեւէ լեզուի երկբարբառները (եռաբարբառները) տարբերակելուց առաջ նախ պիտի որոշել, թէ որոնք են այդ լեզում վանկարար (ձայնաւորական) գործառոյթ իրականացնող հնչոյթները:

Գրաբարի հնչութային կառուցուածքը ներկայացնող տարբեր բնոյթի աշխատութիւններում (բուհական ձեռնարկներ եւ մենագրութիւններ) զուտ ձայնաւորական կազմով երկբարբառներից ու եռաբարբառներից բացի, տարբերակում են նաև «ձայնաւոր + յ(y)/ւ(w) ձայնորդ» կաղապարով երկբարբառներ ու եռաբարբառներ¹: Դա նշանակում է, որ յ(y) եւ ւ(w) ձայնորդներին

1 Գրաբարի ձեռնարկներում (դասագրքներում) տարբերակուող երկրաբառները, իբրեւ երկրորդ բաղադրիչ, մեծաւ մասամբ ունեն վերոյիշեալ ձայնորդներից մէկը (աւ, իւ, եւ, այ, ոյ), իսկ եռաբարբառների երեք բաղադրիչներից երբեմն երկուսն են ձայնորդ, ինչպէս՝ ւյ-այգոյն (տե՛ս Մ.

հին գրական հայերէնում վերագրում է նաեւ ձայնաւորական (վանկարար) գործառոյթ:

Մասնագիտական գրականութեան մէջ տարակարծութիւններ չկան ա(ա), ո(օ), ե(է), ի(ի)՝ ը(թ) հնչոյթների ձայնաւորական բնոյթի վերաբերեալ, իսկ, օրինակ, է(է)² եւ ու(ս) հնչոյթների գործառական արժէքի մասին պատկերացումները տարբեր են. ոմանք այդ հնչոյթները դասում են ձայնաւորների շարքում, ուրիշները համարում են երկբարբառ կամ երկբարբառակերպ (գրատոնցում), իսկ երրորդներն էլ դրանցից միայն էն են համարում երկբարբառ (Գ. Զահուկեան) կամ երկբարբառակերպ (Էդ. Աղայան³): Ոչ ոք, սակայն, ձայնաւորների մէջ չի դասում ւ(ա)ը եւ յ(յ)ն: Հետեւաբար, մնում է միւս հանգամանքը. արդեօ՞ք այդ ձայնորդները հին գրական հայերէնում որոշակի դիրքերում իրականացրել են նաեւ ձայնաւորական գործառոյթ:

Ի(ւ) ձայնորդը հին գրական հայերէնում գործածուել է՝ 1) որպէս ու հնչոյթի բաղադրիչ (լեզու, գարուն, զինուոր եւն), 2) բառամիջում՝ ա) երկու ձայնաւորների միջեւ (աւագ, գաւազան, աւազ), բ) ձայնաւորի եւ բաղաձայնի միջեւ (ալեւր, սիւն, աւր, մաւտ), այն է՝ «երկբարբառային» համարուող դիրքում, 3) բառավերջում՝ ձայնաւորից յետոյ (թիւ, թեւ, նաւ, անիւ): Ինչպէս երկու ձայնաւորների միջեւ, այնպէս էլ բառավերջի դիրքում, մասնագէտների մեծ մասի կարծիքով ւ(ա)ն իրականացրել է բաղաձայնական գործառոյթ (արտաքերութեամբ համարժէք կամ մօտ է եղել վով նշանակուող հնչոյթին): Այդ տեսակէտն, ըստ իս, յենուում է ւի ա-

- ԱԲԵՂԵՍՆ, Մ., Գրաբարի ֆերականութիւն, Երեւան 1936, 10: ՇԱՐԱԲ-ՆԱՆՅԱՆ, Պ., Գրաբարի դասըթաց, Երեւան 1974: ԱԲՐԱՀԱՄԵՍՆ, Ա. Ա., Գրաբարի ճեռմարկ, Երեւան 1976, 5: ԱԻԵՑԻՍԵՍՆ, Հ. Մ. - ՂԱԶԱՐԵՍՆ, Ռ. Ս. Ս., Գրաբարի ճեռմարկ, Երեւան 1986, 6-7: ԱՌԱՔԵԼԵՍՆ, Վ., Գրաբարի ֆերականութիւն, Երեւան 2010, 11-12):
- 2 Գրաբարի է-ն շու տառադարձում ենք պայմանականօրէն՝ միայն ե(է)-ից տարբերակելու համար:
- 3 ԱԲԵՂԵՍՆ, Մ., նշ. աշխտ., 9: ՂԱԶԱՐԵՍՆ, Ս. Ղ., Հայոց գրական լեզուի պատմութիւն, Երեւան 1961, 171: ՀՅԵՒԹՅԱՆՈՒԹԻՒՆ, ի ԱՂԱՅԵՍՆ, է. Բ., Գրաբարի ֆերականութիւն, Երեւան 1962, հտ. Ա., 134-140: ԱՃԱՐԵՍՆ, Հ., ԼՔՃԼ, հտ. Զ., Երեւան 1971, 223: ԱԲՐԱՀԱՄԵՍՆ, Ա. Ա., անդ. ՋՀԱԿԱԿԱՆ, Գ. Բ., Հայոց լեզուի պատմութիւն, հտ. Ա., Երեւան 1982, 27-28: ՄՈՒՐԱԴԵՍՆ, Հ. Դ. Հայոց լեզուի պատմութիւն, հտ. Ա., Երեւան 1982, 30: ԱԻԵՑԻՍԵՍՆ, Հ. Մ. - ՂԱԶԱՐԵՍՆ, Ռ. Ս., նշ. աշխտ., 5: ԱՌԱՔԵԼԵՍՆ, Վ., նշ. աշխտ., 8:

ւանդական (=յետգրաբարեան) արտասանութեան վրայ եւ չի կարող ընդունելի լինել: Առաւել խնդրայարոյց է, սակայն, ձայնաւորի եւ բաղաձայնի միջեւ, այլ կերպ՝ «երկբարբառային» համարուող դիրքը: Այս դիրքում ձայնաւորի եւ ւ(w) ձայնորդի յաջորդականութիւնը որպէս երկբարբառ համարելու հիմնական փաստարկներ առաջադրուում են հետեւեալ դրոյթները. 1) այդ յաջորդականութիւնն ունեցել է մէկ հնչոյթի գործառական արժէք (հմմտ. աւր/մթ (յարաք. դ.), սիւն/սպին, մաւս/մէտ (միտում), հաւր[«հայր» բառի սեռ.-տր. հոլովաձեւը]//հոր[«ջրհոր, ջրափոս»] եւն), 2) այդ դիրքի հնչական բաղադրիչը, արդի հայերէնում ենթարկուելով հնչիւնափոխութեան, վերածուել է պարզ ձայնաւորի (աւդ-օդ, ար-օր, մաւս-մօռ) կամ երկհնչիւնի (սիւն-սիւն, հարեւր-հարիւր, լոյս-լոյս):

Պիտի նկատել, որ գրաբարում կարող էին լինել ոչ միայն, օրինակ, աւր//որ, սիւն//սոյն, մաւս//մէտ, հաւր//հոր տիպի հակադրութիւններ, այլեւ՝ աւր//սար (գեղլմ), սիւն//սին (փուչ, դատարկ, քափուր) (1/0), մաւս//մարտ (պատերազմ, ճակատամարտ), հաւր//համր (անխօս, անբարբառ) տիպի հակադրութիւններ: Հետեւաբար, հնչոյթաբանական վերլուծութեան տեսանկիւնից աւ, իւ հնչիւնակապակցութիւնները ոչ միշտ են հնչոյթային հակադրութիւն ճեւառում միասնաբար՝ իրեւ մէկ հնչոյթ:

Ինչ վերաբերում է ևս հնչիւնակապակցութեանը, թէպէտ մենք չգտանք աւ, իւի տիպի հնչոյթային զուգահեռներ, սակայն դա մեր վերլուծութեան հիմնական դրոյթին չի հակասում, յատկապէս, եթէ նկատի ունենանք, որ այդպիսի հնչիւնական յաջորդականութեամբ բառերի թիւը փոքր է եղել գրաբարում եւ դրանք, որպէս կանոն, անցել են իւով գրութեան, ինչը նշանակում է՝ նաեւ արտասանութեան (հմմտ. մեւս-միւս, բեր-բիւր, հարեւր-հարիւր, ալեւր-ալիւր, առեւծ-առիւծ):

Ց(y) ձայնորդը՝ որպէս «երկբարբառի» բաղադրիչ, հանդիպում է փակ վանկում՝ ա եւ ո ձայնաւորներից յետոյ (հմմտ. գայլ, գայո (աղը, կեղտ, տիղմ), կայծ, հայր, ձայն, մայր, փայտ, բոյս, բոյր, գոյծ, լոյս, կոյս, համբոյր, յոյժ, փոյթ եւն): Հայ լեզուաբանութեան մէջ ընդունուած տեսակէտի համաձայն, այ, ոյ «երկբարբառները» հնչիւնափոխուում են՝ վերածուելով՝ այ եւ ույ երկհնչիւնների: Որ ոյ>ույ հնչիւնափոխութիւն տեղի է ունեցել, կասկած չի յարուցում (ընդ որում ո>ու հիմքով): Սակայն խնդրայարոյց է այ «երկբարբառ»>այ երկհնչիւն հնչիւնափոխութեան հարցը: Հնչոյ-

թաքանական անցման տեսանկիւնից այստեղ փոփոխութիւն չկայ: Այ «Երկբարբառ»>այ երկնչիւն ենթադրեալ անցման դրոյթը յենւում է հնչարտաբերական բացատրութեան վրայ: Վերջին հանգամանքը, առհասարակ, եղել է գրաբարի երկբարբառների (եռաբարբառների) տարբերակման հիմնական չափանիշներից մէկը, որի համար ելակէտ է ծառայել աւանդոյթի ուժ ստացած այն տեսակէտը, համաձայն որի՝ որպէս ի ձայնաւորի դիրքային տարբերակ՝ յն ունեցել է նրան մօտ հնչարտաբերական որակ եւ գրաբարեան փուլում այ «Երկբարբառ» արտասանուել է մօտաւորապէս [աի] (Հմմտ. [հաիր] «հայր», [մաիր] «մայր» եւն): Ըստ այդ տեսակէտի՝ ին եւ յն եղել են միեւնոյն հնչոյթի այլահնչակները, որոնք յատկանշուել են դիրքային բաշխուածութեամբ: Ի հարկէ, յենուելով ինչպէս հայերէնի ընձեռած ներքին հնարաւորութիւնների վրայ, այնպէս էլ դիմելով օտար փոխառութիւնների տառադարձումներին⁴, կարելի է նման ենթադրութիւն անել: Ընդ որում, որպէս այդ տեսակէտի հիմնաւորումներից մէկը՝ նշում է, որ ձայնաւորով սկսուող բառերի բացառական հոլովաճեւը կազմում էր յ (Հմմտ. յաստեղէ «աստղից»~յաստեղաց «աստղերից»), յաշակերտէ «աշակերտից»~յաշակերտաց «աշակերտներից»), իսկ բաղաձայնով սկսուողներինը՝ ի (Հմմտ. ի գեղչէ «գիւղից»~ի գիւղից «գիւղերից»), ի ծովէ «ծովից»~ի ծովուց «ծովերից»): Այս փաստարկը, սակայն, հարցը չի լուծում սկզբունքօրէն, որովհետեւ հոլովակազմութեան դէպքում գործ ունենք ձեւաբանական մակարդակի իրողութեան հետ եւ ոչ թէ՝ հնչոյթաբանական: Այդ տրամաբանութեամբ առաջնորդուելու դէպքում պիտի ասենք, որ միեւնոյն հնչոյթի այլահնչակներ են, օրինակ, սեռ.-տր. հոլովի քերականական իմաստներն արտայայտող -ի (աշակերտ-ի), -ու (ծով-ու), -ա (տիտան-այ), -ո (գետ-ոյ) կամ -ե- (կայս-ե-ր), -ա-(ձկ-ա-ն) բնի ձայնաւորները, ինչին, ի հարկէ, ոչ ոք չի համաձայնի: Դրանք եւս ձեւաբանական մակարդակի իրողութիւններ են եւ որպէս այդպիսիք՝ կարող են դիտուել միեւնոյն ձեւոյթի ենթաձեւոյթներ, բայց ոչ՝ միեւնոյն հնչոյթի այլահնչակներ (կամ ենթահնչոյթներ): Այս առումով, կարծում ենք, առաւել ընդունելի է Օ. Սեմերենիի բացատրութիւնը, ըստ որի՝ հ.-ե. *ի(i) եւ *յ(y), *ու(u) եւ *ւ(w) հընչոյթների միջեւ «գործառական կապն սկսել է հաստատուել»

4 Այս առումով տե՛ս ՀիմքՄԱՆ, Հ., Հայագիտական ուսումնահրութիւններ, Երևան 2004, 68-70: Ա.ՃԱՌԵՆԱՆ, Հ., Հայոց գրերը, Երևան 1984, 582-585:

ձայնդարձի զրոյական աստիճանի երեւան գալու փուլում՝ «վանկարար ոնդայինների եւ նայականների առաջանալու արդիւնքում», երբ «այդ կարճ ձայնաւորները կոկորդային հի (հաւանական է՝ նաեւ ուրիշ հնչոյթների հետ...) կապակցութեան մէջ բաղադայնանախորդ դիրքում անցան երկար ձայնաւորների»: Մինչ այդ վերոյիշեալ հնչոյթներն «ընդհանուր ոչինչ չեն ունեցել եւ յետագայում էլ մնացին առանձին հնչոյթներ»⁵ (ընդգծումն իմն է՝ Վ. Պ.): Բացի այդ, պիտի համոզուած լինել, որ գրաբարում եղել են այ [աի] եւ ոյ [ոի] երկբարբառներ:

Այ, ոյ կապակցութիւններում գրային յի [ի] կամ նրան մօտ արտաքերութիւն ենթադրելու դէպքում անգամ հնարաւոր չէ միանշանակ պնդել, թէ այն եղել է ձայնաւոր, որովհետեւ հնչոյթաբանական (գործառական) առումով այն <յ> հնչոյթի կիրառական տարրերակն է, իսկ «յ» ձայնորդի հնչիւնական տարրերակների ձայնաբանական նկարագիրը, ըստ հնչաշղթայի (իմա՝ հնչիւնական միջավայրի), կարող է զանազանուել ձայնաւորից բաղաձայն անցումային միջավայրում: Դա բոլորովին էլ չի նշանակում, թէ յն փոխել է իր հնչոյթային արժէքը:

Այն, որ գրաբարեան այ, ոյ հնչիւնական յաջորդականութիւնները բարբառներում վերածւում են պարզ ձայնաւորների (հմմտ. հար, հեր «հայր», լուս, լիս «լոյս»), նոյնպէս բաւարար պայման չէ՝ պնդելու, որ դրանք եղել են երկբարբառներ, քանզի արդի գրական հայերէնում եւս կան նմանօրինակ հնչիւնափոխութիւններ (ճիշտ է, որպէս բառակազմական եւ բառափոխական գործընթացների հետեւանք), ինչպէս՝ լոյս-լուսաւոր, բոյս-բուսական, գոյժ-գուժել, բոյժ-բուժել, սառոյց-սառցահատ, կապոյտկապուել եւն, բայց դրանք համարում են երկհնչիւն-պարզ ձայնաւոր / երկհնչիւնի սղում անցումներ:

Գրաբարեան «ձայնաւոր+յ ձայնորդ» կամ «ւ ձայնորդ+ձայնաւոր» հնչիւնակապակցութիւնները բաւարարում են երկբարբառի տարրերակման հիմնական չափանիշներից միայն մէկին, այն է՝ արտասանուում են մէկ վանկի կազմում, սակայն չեն բաւարարում երկրորդ՝ եւ աւելի կարեւոր չափանիշին, որ է՝ ւ եւ յ ձայնորդները գրաբարում չեն իրականացրել վանկարար (ձայնաւորական) գործառոյթ: Չնայած վերջին հանգամանքին՝ մէկ վանկի կազմում արտաքերուող աւ, եւ, իւ, այ, ոյ, երեմն՝ նաեւ ու, ւ ո

⁵ СЕМЕРЕНЬИ, О., Введение в сравнительное языкознание, М. 1980, 157:

Հնչիւնակապակցութիւնները աւանդաբար ճանաչուել են երկբարբառներ, իսկ եաւ, եայ, տյ, իայ, ուայ, ուաւ, ուոյ հնչիւնական կապակցութիւնները՝ եռաբարբառներ:⁶

Կարծում ենք՝ այս հարցում դեր են խաղացել հետեւեալ հանգամանքները. 1) հ.-ե. նախալեզուի համար վերականգնուող երկբարբառները եւ նրանց զարդացումները հայերէնում՝ որպէս հնդեւրոպական լեզուի. 2) օտարազգի հնդեւրոպաբան հայագէտների, մասնաւորապէս՝ Հ. Հիւբշմանի, Ա. Մելիքի՝ որպէս հայերէնագիտութեան բացառիկ հեղինակութիւնների տեսակէտները. 3) ինչու ոչ, յունաբան դպրոցի աւանդոյթը, յատկապէս՝ Դ. Թրակացու քերականութեան մեկնութիւնները, որոնք յունարէնի կաղապարով հայերէնին վերագրել են ոչ հարազատ ձեւեր: Վերջինը, թերեւս, ամէնից քիչ ներգործութիւնն է ունեցել մեզ հետաքրքրող հարցի վրայ, բայց ճիշտ չի լինի առհասարակ այդ գործոնի բացառումը, եթէ նկատի ունենանք, որ Հիւբշմանից սկսած մինչեւ նոր ժամանակները գրաբարի հնչիւնաբանական հարցերը քննելիս չեն անտեսել ինչպէս յունարէն-հայերէն եւ հայերէն-յունարէն տառադարձումները, այնպէս էլ՝ յունաբան քերականութիւններում այդ առնչութեամբ տեղ գտած նկատառումները:

Հնդհանուր առմամբ զգուշաւոր դիրք ընդունելով՝ Դիոնիսիոսի քերականութեան հայերէն մեկնութիւններում տեղ գտած տուեալների ու կարծիքների նկատմամբ («...նա ոչ մի պատկերացում չունի հայերէնի հնչիւնների նշանակութեան եւ նրանց՝ միմեանց նկատմամբ ունեցած յարաբերութիւնների մասին»՝ Հիւբշմանը, սակայն, նրանցում տեսնում է նաեւ ճիշտ բնորոշումներ: Խօսքը յատկապէս յունարէն-հայերէն բաղաձայնական համապատասխանութիւնների մասին է: Ի հարկէ, նոյնը չի կարելի ասել ձայնաւորների բնորոշման առումով՝ Հիւբշմանը, ըստ էութեան, Թրակացու մեկնիչի հետեւողութեամբ գրաբարում ճանաչում է նաեւ և եւ ով գրերով նշանակուող հնչիւնների ձայնաւորական արժէքը (հմտ. «Ճիշտ է նաեւ ձայնաւորների նրա

6 Նշուած եռաբարբառներից առաջին երկուսը՝ եաւ, եայ, ճանաչում են գրեթե բոլոր մասնագէտները, տյ-ը՝ Մ. Արենեանը (տե՛ս ԱԲԵՂԵՍՆ, Մ., թշ. աշխտ., 9), Հ. Անտոեանը (տե՛ս ԱՃԱՌԵՍՆ, Հ., Հայոց գրերը, 593), ուաւ, ուոյ-ը՝ Հ. Անտոեանը (նոյն տեղում) եւ է. Աղայեանը (տե՛ս ԱՂԱՅԵՍՆ, Է. Բ., թշ. աշխտ., 140), իայ-ը՝ Ա. Արքահամեանը (տե՛ս ԱԲՐԱՀԱՍՍԵՍՆ, Ա. Ա., նոյն տեղում): Անտոեանը տարբերակում է նաեւ իաւ, իսի եռաբարբառներ (նոյն տեղում):

բնորոշումը՝ ա, ե, է, ի, ո, ւ, ով, որպէս ա, է, օ, ի, օ, ն, օ, միայն ու-ն (=ն), ելնելով միայն նրանց՝ հայերէնի ու յունարէնի (ՕՍ) գրելաձեւից, չպէտք է դրանք երկրարբառների շարքին դասէր»⁷⁾: Եթէ ւին ձայնաւորական արժէք վերադրելը կարելի է հասկանալ՝ նկատի ունենալով նրա առկայութիւնը ուի կազմում, որի գրութեան հարցում, հայագիտութեան մէջ տեղ գտած կարծիքի համաձայն, Մաշտոցը հետեւել է հին յունարէնի օս երկրարբառային գրութեանը,⁸ ապա մվով տառադարձուել է յունարէնի ան (այսինքն՝ երկար օն), իսկ հայերէնը իր գրաւոր զարգացման որեւէ փուլում երկար ձայնաւորներ չի տարբերակել: Ինչպէս նմանօրինակ տեսակէտները, այնպէս էլ այն, որ Հիւրշմանը գրաբարի համար ենթադրում է Թիֆլիսի բարբառին մօտ հնչարտաքերութիւն,⁹ թելադրում են նրա տեսակէտներին վերաբերուել քննադատաբար:

Պատմահամեմատական հայերէնագիտութեան մէջ գրաբարի ձայնորդական բաղադրիչով «երկրարբառների» նախաձեւեր են համարում հ.-ե. նախալեզուի *աս, *ես, *աի երկրարբառները, որոնք, սակայն, կազմուած են բացառապէս ձայնաւորական բաղադրիչներից. հմմտ. *աս>աւ, *ես>եւ, իւ, ոյ, *աի>այ¹⁰: ի հարկէ, ամենեւին էլ չենք ուզում ասել, թէ նախալեզուի զուտ ձայնաւորական կազմով երկրարբառները հայերէնի գրաբարեան փուլում չէին կարող վերածուել «ձայնաւոր+ձայնորդ» կաղապարով կազմութիւնների (հմմտ. *daiwēr>հյ. տայգը, *aiğ-i-hj. այծ, -*ai>այ(ay), - *audh-o->հյ.աւդ, *auw->աւգն(ել)-*աս>աւ(aw), - *reug->հյ. առեւծ-*ես>եւ(ew) եւն): Պիտի նկատի ունենալ, սակայն, որ երբեմն հայերէնը «ձայնաւոր+ձայնորդ» հնչիւնկապակցութիւն ունի նախալեզուի մէկ ձայնաւորի դիմաց (հմմտ. մայր<*māter, եղբայր<*bhrāter), նոյնիսկ՝

7 ՀինբՇՄԱՆ, Հ., նշ. աշխտ., 63-64:

8 Տե՛ս ԱԲԵՂԵԱՆ, Մ., Մեսրոպ Մաշտոցը եւ հայ գրի ու գրականութեան սկիզբը// Մեսրոպ Մաշտոց, Երեւան 1962, 282. ԱՂԱՅԵԱՆ, Էդ. Բ., Մեսրոպ Մաշտոց, Երեւան 1986, 54-56:

9 Տե՛ս ՀԱՅՆՐԻԽ ՀԻՒԲՇՄԱՆ, նշ. աշխտ., 62:

10 Տե՛ս ՄԵՑԵ, Ա., Դասական հայերէնի համեմատական բերականութեան ուրուագիծ, Ժնև 1988, 32-33: ԱՃԱՌԵԱՆ, Հ., ԼՔԸԼ, Խո. Զ., 510-516: ԱՂԱԲԵԿԵԱՆ, Մ., Հայերէնի համեմատական հեշիւնարանութեան հարցեր// Հայոց լեզուի համեմատական բերականութեան հարցեր, պր. 2, Երեւան 1988, 104-110: Տումանյան, Է. Ղ., Структура индоевропейских имен в армянском языке, М. 1978, 43-44:

թուլացած ձայնաւորի դիմաց (հմմտ. հայլ<*թէտէ՛ր): Համեմատական հնդեւրոպաբանութիւնը վկայում է, որ նախահնդեւրոպական լեզուի երկբարբառները ցեղակից լեզուներում ունեցել են տարբեր զարգացումներ. որոշ դէպքերում վերածուել են երկար կամ կարճ ձայնաւորների (հմմտ. *ai- *daiwer «տայգր»>սնկ. dēvar, լատ. lēvir(<dēvir), *oi- *oinos «մէկ»>լատ. unus, *eu- *leuk-«լուսաւորել» >լատ. lux «լոյս»), որոշ դէպքերում մէկ այլ երկբարբառի (հմմտ. *daiwer յուն. δαήρο, *oinos> գոր. ains «մէկ»), որոշ դէպքերում էլ մնացել են անփոփոխ (հմմտ. *aus- «ականջ»>լատ. auris, լիտվ. ausis) եւն: Հայերէնում նոյնակս, որպէս հ.-ե. լեզուի, միանգամայն բնական են վերոյիշեալ անցումները: Կարեւոր է, սակայն, թէ հին հայերէնի «երկբարբառային» համարուող միաւորների կազմում ձայնորդական բաղադրիչները ձայնաւորակա՞ն, թէ՝ բաղաձայնական բնոյթ ունեն:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախահնդեւրոպական լեզում տարբերակւում են ր, լ, տ, ո ձայնորդների նաեւ վանկարար (ձայնաւորական՝ բ, վ, դ, ն) տարբերակներ, Ա. Մեյէն հնարաւոր է համարել նախալեզում նաեւ Յ, օֆ և արթօրթերթամ, առթոփիպի երկբարբառների գոյութիւնը՝ վանկարար ձայնորդներին վերագրելով ինքնուրոյն հնչոյթների կարգավիճակ¹¹: Այս կարծիքը չի շրջանցել յետագայ հայագիտական միտքը: Այսպէս. «Հնդեւրոպական ձայնորդները (յ, ս, ր, լ, տ, ո) միանալով ձայնաւորների հետ կազմում էին երկբարբառներ...»,- գրում է Գ. Զահուկեանը:¹² «Ինչպէս գիտենք, հնդեւրոպական նախալեզուն ունէր ի, ս, լ, ր, տ, ո ձայնորդները, որոնցից իւրաքանչիւրը կարող էր հանդէս գալ իբրեւ ձայնաւոր, իբրեւ երկբարբառի բաղադրիչ (ընդգծ. իմն է-վ. Պ.) եւ իբրեւ բաղաձայն», - հաստատում է ի. Աղայեանը¹³: Ա. Մեյէնի տարբերակած երկբարբառների համակարգը լիովին կամ

11 Տե՛ս Մեյէ, Ա., *Введение в сравнительное изучение индоевропейских языков*, М.-Л. 1938, 134-142:

12 ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ., Հիմ հայերէնի հոլովման սիստեմը եւ նրա ժագումը, Երեւան 1959, 161:- Ակադ. Գ. Զահուկեանի աւելի ուշ հրատարակուած աշխատութիւններում նման պնդում այեւս տեղ չի գտել, ինչից կարելի է եզրակացնել, որ նա վերանայել է այդ տեսակեւոր (հմմտ. ՋՀԱԿԿԱՆ, Գ. Բ., *Сравнительная грамматика...*, Գ. Բ. ԶԱՀՈՒԿԵԱՆ, Հայոց լեզուի պատմութիւն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետեւ՝ ՀԼՊՆԾ), Երեւան 1987):

13 ԱՂԱՅԵԱՆ, Է. Բ., Աշխատ., 91:

մասնակիորէն ընդունել են նաեւ ուրիշները¹⁴: Իր տեսակէտը Ա. Մեյէն հիմնաւորում է հնդեւրոպաբանութեան մէջ ընդունուած այն դրոյթով, ըստ որի՝ *w(*Ա) եւ *y(*Ա) ձայնորդները, համապատասխանաբար, ս եւ և ձայնաւորների բաղաձայնական տարբերակներն են: Սակայն պիտի նկատի ունենալ, որ *ai, *au, *ei, *eu, *oi, *ou երկբարբառների երկրորդ բաղադրիչներն ինքնուրոյն գոյութիւն ունեցող ձայնաւոր հնչոյթներ էին եւ ոչ թէ պարզապէս՝ *w(*Ա), *y(*Ա) ձայնորդների դիրքային տարբերակներ, իսկ թէր, ԱԱ, ո՛մ, ո՛ն գոյգերը միեւնոյն հնչոյթի այլահնչակներ էին ու ոչ թէ՝ ինքնուրոյն հնչոյթներ: Բացի այդ, Յ, Յ, Ո հնչիւնների տարբերակման հիմք է տալիս միայն հին հնդկերէնը (հմմտ. սնսկ. յակտ «լսարդ», որ-կա «գայլ», րի-տ-սս «հայոնի մէջ», Եղանակ-պարձր), թշնհ(=*թշ-«ամբողջական, լայն»), որի դերը, հին յունաբէնի հետ միասին, նախահնդեւրոպական լեզուական համակարգը վերականգնելիս գերազնահատուել է գրեթէ ողջ ժԹ. դարի պատմա-համեմատական հնդեւրոպաբանութեան մէջ:¹⁵ Ինչ վերաբերում է հայերէնին, գրաբարում չէին կարող լինել սանսկրիտին բնորոշ -ց, որ-, տ-ց, Եցհ-, թ-ց տիպի վանկեր, քանզի հայերէնն արդէն իսկ ունէր թոյլ ը(թ) ձայնաւորը, որի առկայութեամբ պարզապէս բացառում էր առանց ձայնաւորի վանկի գոյութիւնը գրաբարում: Բացի այդ, ինչպէս սանսկրիտում, այնպէս էլ հ.-ն. ուրիշ հին լեզուներում (յունաբէն, լատիներէն, սլավոներէն) Յ, Յ, Ո, Ո բաղադրիչներով երկբարբառներ չեն տարբերակւում¹⁶:

Որոշ հայերէնագէտներ «երկբարբառի» բաղադրիչ ւ-ը տառադարձում են ս-ով (համապատասխանաբար՝ աւ-ը՝ au, եւ-ը՝ eu, իւ-ը՝ iu), յ-ն՝ ի-ով (համապատասխանաբար՝ ոյ-ը՝ oi, այ-ը՝ ai), իսկ

14 ПРОКОШ, Э., *Сравнительная грамматика германских языков*, М. 1954, 92.

КРАСУХИН, К. Г., *Введение в индоевропейское языкознание*, М. 2004, 64-66:

15 САВЧЕНКО, А. Н., *Сравнительная грамматика индоевропейских языков*, М. 1974. СЕМЕРЕНЬИ, О., Յշ. աշխատ.:

16 ЗАЛИЗНЯК, А. А., *Грамматический очерк санскрита* // КОЧЕРГИНА, В. А., *Санскритско-русский словарь*, М. 1978, 788. ВИННИЧУК, Л., *Латинский язык*, М. 1985, 17, 20. ВАЙАН, А., *Руководство по старославянскому языку*, М. 1952, 40. ГРЕШЕМ МЕЙЧЕН, Дж., *Учебник греческого языка нового завета*, М. 2002, 8-9: Ա. Մեյէն, հետեւելով հ.-ն. Յախալեզուում վերոյիշեալ ձայնորդներով երկրաբառներ հանաչելու իր սկզբունքին, այդպիսիք տարբերակում է նաեւ ընդհանուր պալպուներէն լեզուում (տես ՄԵЙԵ, А., *Общеславянский язык*, М. 1951, 46-65):

ուրիշները՝ w-nվ (aw, ew, iw) եւ y-nվ (oy, ay), ինչը նշանակում է, որ ս, և տառադարձութեամբ յիշեալ ձայնորդներին վերագրուում է ձայնաւորական, իսկ w(ն), y(ի) տառադարձութեամբ՝ բաղաձայնական արժէք։ Այդ հարցին պատասխանելու համար մենք եւս պիտի դիմենք յայտնի դրոյթին։ Եթէ Մաշտոցը աւդ, աւր, մաւս, ալեւր, բեւր, սիւն, արիւն, հայր, մայր, լոյս, զոյժ եւ նմանօրինակ բառերը գրել է ւ(w) եւ յ(y) ձայնորդներով եւ ոչթէ՝ ու(u) եւ ի(i) ձայնաւորներով (որքան էլ նշուած ձայնորդները ենթադրաբար ունեցել են ու եւ ի ձայնաւորներին մօտ արտաքերութիւն), նշանակում է, այնուամենայնիւ, այդ կապակցութիւններում նրանք ու-ից եւ ի-ից տարրեր հնչիւնական որակ են ներկայացրել։ Այդ դիրքում նրանք արդէն իսկ արտաքերուել են իբրեւ բաղաձայն-ձայնորդներ, ինչպէս, օրինակ, արդի հայերէնի յու (<իւ, եւ), ույ (<ոյ) կամ այ (<այ) երկհնչիւնները։

Այդ հիմնահարցի հանգուցալուծման համար կարեւոր են հետեւեալ իրակութիւնները։

Ա) Նախահնդեւրոպական *աս, *աի, *ես երկբարբառները հայերէնի ինքնուրոյն զարգացման նախադրաբարեան փուլում գլունուել են աստիճանական որակափոխութեան գործընթացում, որ մինչեւ Ե. դար արդէն յանգեցրել է դրանց երկրորդ՝ ոչ վանկարար բաղադրիչների (i, u) ձայնորդացման¹⁷։ Որակափոխութեան այդ ընթացքը շարունակուել է գրաբարեան փուլում միջին հայերէնում յանգեցնելով լիարժէք փոփոխութեան, ուստի եւ այս շրջանի ուսումնասիրութիւնները արդէն խօսում են ոչ թէ այ, ոյ, եւ, իւ երկբարբառների, այլ՝ այ, ոյ (=ույ), եւ իւ (=յու) երկհնչիւնների մասին¹⁸։ Այս միտումն ամրագրուում է մեր լեզուի աշխարհաբարեան փուլում։

17 Եթէ «վաղնջահայերէնի» փուլում (Ք.ա. Գ. հազարամեակի սկզբներից մինչեւ Ք.ա. Ժ. դար) Գ. Զահուկեանը դեռեւս հնարաւոր է համարում նախահնդեւրոպական երկբարբառային համակարգի պահպանումը, ապա «հնագոյն շրջանում» ոչ միայն որոշակիօրէն փոփոխուած է երկբարբառների կազմը, այլեւ առկայ են եռաբարբառներ, բայց բոլորն էլ՝ միայն ձայնաւորական բաղադրիչներով (տե՛ս ԶԱՀՈՒԿԵԱՆ, Գ. Բ., ՀԼՊՆԺ, Երեւան 1987, 225-228, 345-346)։

18 ՂԱԶԱՐԵԱՆ, Ս., Միջին հայերէն, Երեւան 1960, 227-251. Նոյն, Միջին գրական հայերէն, հա. Ա., Երեւան 1972, 89-109։

Բ) «Երկբարբառի» բաղադրիչ ւ(ա) ձայնորդը ունենում է երկու տիպի զարգացում: Մի դէպքում այն ձուլում է վանկարար աշխատածութելով պարզ ձայնաւորի (գրութեամբ արտայայտում է ներմուծուած (իմա՝ լատինական) օ-ով. աւ>օ), միւս դէպքում՝ որպէս հին իւ(ես) երկբարբառային կազմութեան բաղադրիչ ւ-ը կրկին վերապլում է իր նախասկզբնական՝ նախահնդեւրոպական որակին վերադառնալու գործընթաց: Այլ կերպ ասած՝ հ.-ե. *ես երկբարբառի բաղադրիչ ձայնաւոր Ա-ն մինչեւ Ե. դար իր մի քանի հազարամեայ հոլովոյթի ճանապարհին վերածում է ձայնորդական Ա/Վ-ի, ապա կրկին շրջադարձ է կատարում դէպի ձայնաւորացում:

Այսպիսի մեկնաբանութիւնը առաջին հայեացքից կարող է կամայական թուալ, բայց այն միանգամայն հաւանական է, եթէ նշուած գործընթացը դիտարկենք համակարգային տեղաշարժերի համատեքստում եւ ոչ թէ՝ իբրեւ առանձնակի երեւոյթ:- Զ՞է որ իւ հնչիւնակապակցութեան ձայնաւորական բաղադրիչը՝ ի-ն, իր հերթին միջին հայերէն-աշխարհաբար անցման փուլում վերածում է բաղաձայնական ձայնորդի: Իւ «Երկբարբառի» բաղադրիչներից միայն մէկի՝ ի-ի կամ ւ-ի որակափոխութիւնը, միւսի անփոփոխ մնալու դէպքում, կյանգեցնէր կամ նոր երկբարբառի առաջացման՝ *իսւ (օր.՝ *արիտն, *սիտն) կամ՝ երկու ձայնորդների անմիջական հարեւանութեան, իսկ դրա հետեւանքով՝ երեք-չորս բաղաձայնի կուտակման, ինչը բնորոշ չէ հայերէնի գրաւոր զարգացման որեւէ փուլի հնչիւնական կառուցին (Հմմտ. *արյւն, *սյւն):

Ուստի բառավանկային հաւասարակշռութիւնը պահպանելու հակուած լեզուն ինքն է ուղղորդում ներքին զարգացումները: Դա առհասարակ լեզուներին բնորոշ գործընթաց է, որ ենթակայ չէ արտաքին, այսինքն՝ մարդու կողմից կառավարման: Այն մարդկային աչքի համար անտեսանելի ներկեզուական խմբում է, որ, բնորոշ լինելով լեզուներին առհասարակ, իւրաքանչիւր լեզում կարող է ունենալ միւսներից տարբեր հանգուցալուծում: Պատահական չէ, որ մարդը (տուեալ դէպքում գիտնական լեզուաբանը) կարող է ասել, թէ իրենից հազարամեակներ առաջ ինչպիսի պատկեր է ներկայացրել լեզուն, կամ ինչ փոփո-

խութիւններ է կրել, սակայն չի կարող ասել, թէ ինչ պատկեր կը ներկայացնի այն, օր.՝ յիսուն կամ հարիւր տարի յետոյ:

Գ) Գրաբարից աշխարհաբար անցման ճանապարհին էականօրէն կրծատւում են յ ձայնորդի կիրառութեան ոլորտները: Բառասկզբի դիրքում այն անցնում է միջնալեզուային հնչիւնից կոկորդային հ-ի (Հմմտ. յուշ-հուշ, յաւէտ-հաւետ, յարմար-հարմար, Յովհաննես-Հովհաննես եւն), իսկ բառավերջի դիրքում ընկնում է (Հմմտ. տղայ-տղա, շղթայ-շղթա, արքայ-արքա, երեկոյ-երեկո եւն)՝ վերականգնուելով միայն բառակազմութեան ժամանակ (Հմմտ. արքայական, շղթայակապ, երեկոյանալ եւն): Բացառութիւն է գոյ բառը: Կարծում ենք՝ այս երեւոյթը ձայնաւոր>(բաղաձայն)-ձայնորդ (իյօ, եյօ) անցման շղթայի օղակներից մէկն է, որ նոյնպէս վկայում է գրաբարեան յ-ի ոչ ձայնաւորական բնոյթի մասին:

Հետեւաբար, այդ հնչիւնական յաջորդականութիւնների իսկական բնոյթը ճիշտ են արտացոլում aw(աչ), ew(եչ), iw(իչ), ay(այ) օյ(օի)տառադարձումները եւ ոչ թէ՝ աւ, ես... եւն:

Կարծում ենք՝ վերոշարադրեալը հիմք է տալիս ասելու, որ հին գրական հայերէնում աւ, եւ, իւ, այ, ոյ հնչիւնակապակցութիւններն այլեւս երկրարբառներ չչին: Միաժամանակ, ճիշտ չի լինի ասել, թէ դրանք պարզ հնչիւնական յաջորդականութիւններ էին, ինչպէս, օրինակ, յար-մար, յիշել, մա-ն(ը)ր, դուս-տ(ը)ր, հե-դուլ, յա-րել, յո-ոի, նո-խազ բառերում առանձնացուած վանկերի բաղադրիչները: «Երկրարբառ» համարուած այդ հնչիւնակապակցութիւնները հնչարտաբերական միասնութիւններ էին, ինչը դրսեւորուում է ոչ միայն պատմական հնչիւնափոխութիւնների դէպքում (Հմմտ. աւ>օ. աւր>օր, մալր>մօր, եւ>իւ>յու. հարեւր>հարիւր, սիւմ>սիւն, ոյ>ույ. լոյս>լույս), այլեւ՝ ձեւաբանական հերթագայութիւնների (Հմմտ. իւ>եա. սիւն>սեան, արիւն>արեան): Գրաբարեան աւ, եւ, իւ, այ, ոյ բաղադրիչները մեր համոզմամբ երկրարբառակերպ էին: Երկրարբառակերպ է նաեւ ւո-ն, որ հանդիպում է -ցի ածանցն ունեցող ո պարզ հոլովման բառերի թեք հոլովներում (Հմմտ. հելլենացի-ւոյ, -ւոց, -ւովի, -կողբացի-ւոյ, ւոց, ւովի), ո-ա խառն հոլովման բառերի եզ. սեռ. եւ տր. հոլովում (Հմմտ. գարի-ւոյ, թշնամի-ւոյ եւն):

Եղ. Աղայեանը հին գրական հայերէնում ընդունել է նաեւ ուա (զուարթ, լուար, տուան, տուար, «տուեցրի», հեղուաք «քափեցինք», աստուած, ստուար), ուե (քուել, կոուել, արուեստ, հո-

վուել, հաշուել, պատռել), ուի (սուին, նուիրի «նուիրում է», արուի), ուո (զինուոր) երկբարբառների եւ ուայ (տուայ «տուեցի», լուայ «լսեցի»), ուաւ (տուաւ «տուեց», լուաւ «լսեց»), ուայ (ածուոյ, թուոյ) եռաբարբառների եւ ուէ (նուէր, պատռւէր) երկբարբառակերպի գոյութիւնը: Սակայն նշուած, այն է՝ ու բաղադրիչով երկբարբառային (եռաբարբառային) կազմութիւնների գոյութիւնը գրաբարում Հ. Մուրադեանը մերժել է մի հիմնաւորումով, ըստ որի՝ վերոյիշեալ Հնչիւնական զուգորդութիւններում ու գրով արտայայտուել է v(վ)-ի Հնչիւնական արժէքը: Եթէ, ըստ Աղայեանի, բաղաձայնին յաջորդող եւ ձայնաւորին նախորդող դիրքում գրային ու-ն ունեցել է [ու] արտաբերութիւն (այդ Հնչիւնին նա տալիս է «բաղաձայնական ու» անուանումը) եւ առհասարակ ու, և, վ գրերով նշանակուող Հնչիւնները համարում է <ու> Հնչոյթի ենթահնչոյթներ¹⁹, ապա Հ. Մուրադեանի կարծիքով նշուած դիրքում ու-ն ունեցել է [վ]-ի Հնչիւնական արժէք եւ համապատասխանաբար՝ և, վ գրերով նշանակուող Հընչիւնների հետ ներկայացնում է <v(վ)> Հնչոյթը²⁰:

Այս ամէնից հետեւում է, որ ու բաղադրիչով երկբարբառային (եռաբարբառային) կազմութիւնների մասին կարելի է խօսել միայն ու-ի Հնչոյթա-Հնչիւնային արժէքները ճշտելուց յետոյ:

Ու-ն հանդէս է գալիս՝

ա) բառամկզբում՝ բաղաձայնին նախորդող դիրքում (ուրու, ուրախ, ութ, ուժեղ, ուլ, ուխտ, ուժանալ, ուղիղ, ումպէտ «անպիտան, անարժէք», ունայն, ութել «ականջ», ուստր «որդի»),

բ) բառամիջում՝ բաղաձայնին յաջորդող եւ ձայնաւորին նախորդող դիրքում, այլ կերպ՝ երկբարբառային համարուող դիրքում (հմմտ. ուրուական, աստուած, արուար, տուայս «ջրգողութեամբ տառապող», աղուէս),

գ) բառավերջում (ուրու «ուրուական», արու, լեզու, առու, ստնտու «ծծմայր», աղու «հեզ, քաղցրաբարոյ», կծու «այրող, բարկ»). այս դիրքում ու-ն հանդէս է գալիս նաեւ որպէս հոլովական վերջաւորութիւն, այսինքն՝ քերականական նշանակութեամբ (հմմտ. զինու(<զէմ), ժամու, ծովու, առաւօտու, արեւու, գանձու, վրիժու (<վրէժ), աղուիսու, առեւծու, հաւու, ուղտու եւն)՝ արտայայտելով եղ սեռ-տը. եւ գործ. հոլովների իմաստներ,

19 ԱՂԱՅԵԱՆ, Է. Բ., Աշ. աշխ., 96:

20 ՄՈՒՐԱԴԵԱՆ, Հ. Դ., Աշ. աշխ., 238-239:

ինչպէս՝ գանձու՝ «գանձի» եւ «գանձով», հաւու՝ «հաւի» եւ «հաւով», արեւու՝ «արեւի» եւ «արեւով» եւն:

Հայերէնի ներքին քննութեան տեսանկիւնից բառասկզբի դիրքը ու-ի հնչիւնական արժէքը քննելու հնարաւորութիւն առանձնապէս չի տալիս, իսկ օտար լեզուներից, մասնաւորապէս՝ հին յունարէնից կատարուած տառադարձումներն առանձին վերցրած հազիւ թէ կարող են հարցի քննութեան յուսալի յենարան լինել: Այս առումով աւելի կարեւոր են բառամիջին եւ բառավերջի դիրքերը: Բառավերջի դիրքում ու-ն, զուտ հնչոյթային գործառոյթից բացի (հմմտ. լեզու, ուրու, արու, կծու եւն), իրականացնում է նաև ձեւաբանական գործառոյթ. այն ու արտաքին հոլովման ենթարկուող բառերի եզ. սեռ.-ար. գործ. Հոլովների ցուցիչն է (հմմտ. առաւօտ-ու (հին՝ առաւաւտ), «առաւօտի/առաւօտով», գանձ-ու «գանձի/ գանձով», զարդ-ու «զարդի/ զարդով», ծով-ու «ծովի/ ծովով», հաւ-ու «հաւի/ հաւով», վրիժու(<վրէժ> «վրէժի/ վրէժով», փոք-ու «փոքրի/փոքրով» եւն): Որպէս եզ. գործ. ցուցիչ՝ ու-ն համարժէք է ա պարզ եւ ի-ա, ո-ա խառն հոլովումների -ու (տիտանաւ «տիտանով», Արշակաւ, Անահտաւ, Հայկաւ, Տրդատաւ, աշակերտաւ, ազատաւ, աշխարհաւ, գուսանաւ, մեծաւ, ոսխաւ, սահմանաւ, աղաւնեաւ, բարեաւ, թշնամնաւ, կենդանեաւ եւն), ի պարզ հոլովման իւ (սրտիւ, այծիւ, դարիւ («բարձր տեղ նշանակութեամբ»)), կարօտիւ, ճայնիւ, օծիւ, երեւութիւ (<երեւոյթ>, րոպէիւ) վերջաւորութիւններին, ինչը նշանակում է, որ այդ դիրքում ու-ն պարզ հնչոյթի ցուցիչ չէ, այլ՝ երկբաղադրիչ միաւորի, մեր կարծիքով՝ երկբարբառակերպի: Եզ. գործ. երկբաղադրիչ վերջաւորութիւն ունեն նաև ո պարզ հոլովման (արտաքին թեքման) ենթարկուող բառերը՝ -ով (հմմտ. գործով, արուով, աղիւսով, գինով, գրով (<գիր>), թուով (<թիւ>)) եւն: Հստ Հ. Հիւրշմանի՝²¹ ա) բաց վանկում, այդ թւում՝ բառավերջի դիրքում ւ-ը հնչել է ինչպէս բաղաձայն (շրթնատամնային) վ. բ) եւ որովհետեւ ո-ից յետոյ ւ գրելու դէպքում ով հնչիւնակապակցութիւնը կը նոյնանար ու-ի հետ, Մաշտոցն այդ դիրքում գործածել է վ գիրը, որպէսզի, օրինակ, կով, ծով, գինով, թուով բառերի (բառաձեւերի) վերջնահունչ -ով-ը չշփոթուէր ու-ի հետ,²¹ այսինքն՝ այդ բառաձեւերը չունենային *կոու, *ծոու, *գինոու, *թուոու գրային տեսքը: Այս բացատրութիւնը որքան էլ համոզիչ հնչի, այնուամենայնիւ, հակասում է մաշտոցեան «մէկ հն-

չիւն-մէկ տառ» սկզբունքին, որն ընդունում են մաշտոցեան այբուբենի բոլոր հետազոտողները, այդ թւում՝ Հ. Հիւբշմանը: Այս հարցում, կարծում ենք, իրականութեանը աւելի մօտ են Ա. Մեյխն եւ Հ. Աճառեանը, ովքեր բոլոր դիրքերում ւ-ին վերադրում են կիսաձայնային (ըստ Աճառեանի՝ յունարէնի ս-ին մօտ) հնչում եւ ոչ երբեք՝ բաղաձայնական: Այլապէս, ճիշտ է նկատում Աճառեանը՝ ասելով, որ Մաշտոցին ոչինչ չէր խանդարում բաց վանկում, այդ թւում՝ բառավերջի դիրքում՝ գրելու վ (այսինքն՝ *նավ, *քիվ, *տիտանավ, *ձայնիվ) եւ ոչ թէ՝²²:

Ընդունելով, որ բառավերջի աւ, իւ հնչիւնական զուգորդումներում եւս ւ-ը չի վերածում բաղաձայն վ-ի, այնուամենայնիւ, Ա. Մեյխն, Հ. Աճառեանը, Մ. Աբեղեանը եւ է. Աղայեանը համամիտ են Հիւբշմանի հետ, երբ վերջինս հայերէնի ու-ի երկդիր ձեւը բացատրում է որպէս Մաշտոցի կողմից յունարէնի գըրութեան սկզբունքին հետեւելու դրսեւորում²³: Այն է՝ հին յունարէնի օն երկբարբառը Ե. դարում արդէն վերածուել էր պարզ ձայնաւորի, սակայն գրութիւնը շարունակում էր մնալ հինը: Ի հարկէ, գրութեան եւ արտասանութեան անհամապատասխանութիւնը սովորական երեւոյթ է հին գրաւոր աւանդոյթ ունեցող ժողովուրդների կեանքում, իսկ յունական գրաւոր մշակոյթը մինչեւ Ե. դար շուրջ հազարամեեակի ճանապարհ էր անցել եւ բնական է, որ այդօրինակ անհամապատասխանութիւններ ունենար: Սակայն քիչ հաւանական է, որ հայերէնի համար նոր տառեր յօրինող Մաշտոցը, որ, ըստ միահամուռ պնդման, առաջնորդուել է «մէկ հնչիւն-մէկ տառ» սկզբունքով, ու հնչոյթի հարցում բացա-

22 ԱՃԱՌԵԱՆ, Հ., Հայոց գրերը, 588:

23 Հ. Մարկվարտն աւելի հեռուն է գնում: Նրա կարծիքով Մաշտոցը յունարէնին հետեւել է ոչ միայն օս (=ու) գրութեան հարցում («... Մաշտոցը պարզապէս վերցրել եւ կիրառել է՝ ու-ն, ինչպէս նաև բառամիջում վ բաղաձայնը, կամ աւելի նիշո՞ւ և կիսաձայնաւորը արտայայտելու համար, որի հետեւանելով նրանց հեջիւնական պատկերի արտայայտութիւնը շատ է վնասուել: Առհասարակ բառամիջեան եւ բառավերջի վ-ի արտայայտութիւնը մաշտոցեան համակարգի թոյլ կողմն է»), այլեւ «յունական ա-ն արտայայտելու համար օգտագործուել է ով տառարդումը», որպին հետեւ «հայերէնը յունարէնի այդ հեջիւնը չուներ», իւ-ով «փոխարինել է հուն. Ս-ին», իսկ այ եւ ոյ երկրարտաների հեջիւնական պատկերը ներկայացնելու համար հետեւել է ասորական ֆերականութեանը» (ՄԱՐԿՎԱՐՏ, Հ., Հայոց այրութեմի ժագումը եւ Մաշտոցի կեմագրութիւնը// ՄԵԽՄՊ ՄԱՇՏՈՑ, Երեւան 1962, 173-174):

ոռութիւն արեց եւ կուրօրէն հետեւեց յունական գրութեանը: Ու-ի հնչարտաբերական բնոյթի հարցում եւս, կարծում ենք, դեր են խաղացել այն երեք հանգամանքները, որոնք մենք նշեցինք ձայնորդական բաղադրիչներով միւս «երկբարբառային» եռաբարբառային» կազմութիւնների համար:- Երբ կայ կանխակալ տեսակէտ, որ գրաբարեան ու-ն եղել է պարզ ձայնաւոր, ուրեմն մնում է համոզիչ բացատրութիւն գտնել նրա երկտառ գրութեան համար: Այնինչ՝ հարցը շատ աւելի պարզ լուծում է ստանում, երբ մաշտոցեան մկդրունքը կիրառում ենք հետեւղականօրէն: Այն է՝ գրերի գիւտի շրջանում եւ ըստ ամենայնի՝ ողջ Ե. դարում ու-ն չի եղել պարզ ձայնաւոր, այլ եղել է երկրաբառակերպ, ինչպէս եւ, իւ, աւ, այ, ոյ ենչինակապակցութիւնները: Հնարաւոր է, որ ու-ի ձայնաւորացումը աւելի վաղ է տեղի ունեցել, քան, օր., աւ-ի ձայնաւորացումը, բայց այդ մասին որոշակի բան ասելը գրեթէ անհնարին է, քանի որ նրա գրութիւնը շարունակել է մնալ հինը՝ աւանդականը, անկախ բանաւոր խօսքում ձեռք բերած նոր հընչարտաբերական որակներից:

Ինչ վերաբերում է յունարէն օս-հայերէն ու առնչութեանը, ապա ըստ Հ. Աճառեանի ներկայացրած յունարէնից հայերէն փոխառութիւնների ցանկի, առկայ են հետեւեալ համապատասխանութիւնները. օս-ու (հմմտ. akolóuthos-ակողութ (րիւզ. տիտղոս), kourelús- գորուայ (սափրիչ), kourēbes-կուրես (քուրմ) maroúlion-մառուլ (քոյս), iouli's-իւլիդա (ձուկ), oudéteron-ուդետերոն (չեզոֆ), ouraniskos-ուրանիսկոս (քիմք), phōsourá փոսուռայ (լուսատիկ)), օս-ի (հմմտ. boúbalon-բորողոն (գոմէշ)), օս-ու (հմմտ. ailouros-եղուորս (կատու)), օս-ի (հմմտ. lingouúrion-լինգիրոն (քար)), յ-ու (հմմտ. smyrna, smyrra-զմուռս), օս-իւ (հմմտ. mousíon-միսիոն (մողա), ևս-ու (հմմտ. periudeutés-պերետուտ (հոգեւոր տեսուչ))²⁴: Որքան էլ որ մեծ է օս-ու համապատասխանութիւնն ունեցող բառերի թիւը, այնուամենայնիւ, այն միանշանակ չէ: Ուստի միանշանակ չէ նաեւ վերոյիշեալ պնդումը, թէ <ու> հնչոյթի երկտառ գրութիւնը յունարէնի օս գրութեանը տառացի կերպով հետեւելու արդիւնք է:

Ինչպէս արդէն նշուել է, գրաբարում ու պարզ հոլովման ենթարկուող բառերը այդ վերջաւորութիւնն ունեն նաեւ եզակի գործիականում, իսկ հին յունարէնը գործիականի ձեւը չի պահ-

24 ԱՃԱՌԵՆԱՆ, Հ., Հայոց լեզուի պատմութիւն, II մաս, Երևան 1951, 10-34:- Պահպանում ենք գրեսում առկայ լատինատառ տառադարձումը:

պանել: Երկրորդական չէ նաեւ այն իրողութիւնը, որ բառակազմի համապատասխանութիւն չկայ յունարէնի 2րդ (այսինքն՝ սեռականում -օս վերջն ունեցող) եւ գրաբարի ու հոլովումների միջեւ: Այսպէս, նևո՞-որդ-ւոյ, ծարօս-նուիրի, ծագա՛տ(η)րօս-դ(ρ)ատեր, լեռու-տաճարի (յգն.- աց), օնկոս-տան (յգն. տանց), նհօսու-կղզ-ւոյ (Տ.-կղզւոյ, յգն.-եաց), տրատիցոս- զօրավարի (յգն.-աց) եւն: Միւս կողմից, եթէ գրաբարում ձեւաբանօրէն տարբերակուած չեն սեռական եւ տրական հոլովները (ըստ էութեան՝ նախագրաբարեան մի փուլում է տեղի ունեցել այդ երկու հոլովաձեւերի ձեւաբանական նոյնականացումը), ապա յունարէնում դրանք յստակօրէն տարբերակուում են (Հմմտ. անթրապուշ/Ս./-անթրապաֆ/Տ./-«մարդոյ», -լօցու/Ս./-լօցա/Տ./«քառի», չըրցու/Ս./ չըրցա/Տ./«գործոյ» եւն):

Բառամիջի դիրքում ու-ի հնչիւնական արժէքի համար կարեւոր են յատկապէս բաղադրեալ կազմութիւնները, որոնցում արդի հայերէնում առկայ է ու/վ հնչոյթային հերթագայութիւնը (այլ կերպ ասած՝ ու/վ ձեւահնչոյթը, ինչպէս՝ առու-առուի (առվի), լեզու-լեզուական (լեզվական), բու-բուէն (բվէն), ուրու-ուրուական (ուրվական), աղու-աղուանալ (աղվանալ «քաղցրաբարոյ ձեւանալ, խորամանկել»):

Գրաբարում -ուա- հնչիւնական յաջորդականութիւնն ունեցող բառերը (բառաձեւերը) միարժէք չեն ու/վ հերթագայութեան տեսանկիւնից: Մի մասի դէպքում այդ հերթագայութիւնը վերաբերում է պատմական հնչիւնափոխութեանը (Հմմտ. աստուած>աստված, ստուար>ստվար, դիպուած>դիպված, կալուած>կալված), իսկ միւսների դէպքում՝ ձեւահնչոյթաբանութեանը (Հմմտ. լեզու- (լեզուական) լեզվական, արու- (արուամոր) արվամոր, առու- (առուահան) առվահան, ուրու- (ուրուական) ուրվական), որովհետեւ առաջին կարգի օրինակներում կայ միայն <վ> հնչոյթ (հետեւաբար՝ <վա> հնչոյթային յաջորդականութիւն), ի տարբերութիւն երկրորդ կարգի օրինակների, որոնցում առկայ է ու/վ ձեւահնչոյթաբանական (ու եւ վ հնչոյթների) հերթագայութիւն: Կարծում ենք՝ վերոշարադրեալը բաւարար չափով հիմք է տալիս ասելու, որ առնուածն Ե. դարի սկզբներին երկտառ ու-ով նշանակուած հնչոյթը հայերէնում չի եղել պարզ ձայնաւոր: Այն եւս եղել է երկբարբառակերպի ցուցիչ, ինչպէս որ եւ-ը կամ իւ-ը, ընդ որում՝ այդպիսին է եղել բոլոր դիրքերում եւ ոչ թէ՝ միայն «երկբարբառային» համարուող դիրքում: Հնչիւնական դիրքը, այլ կերպ ասած՝ հնչաշղթան է պայմանաւորել ու երկբարբառակերպի արտաբերական (հնչիւնա-

յին) երանգը եւ հնչոյթացին համակարգում տեղի ունեցող զարդացումներով է պայմանաւորուած եղել, թէ միջինհայերէնեան եւ աշխարհաբարեան փուլերում գրաբարեան ու երկբարբառակերպ հնչոյթը որ դիրքում հնչարտաբերական ինչպիսի փոփոխութիւն կը կրի:

Բառասկզբի եւ բառավերջի դիրքերում այն վերածուել է պարզ ձայնաւորի (Ա) (ինչպէս օրինակ աւ>օ/ն հնչիւնափոխութիւնը փակ վանկում), իսկ բառամիջում՝ ձայնաւորին նախորդող դիրքում, վերածուել է բաղաձայնի, այսինքն՝ ուժեղ է եղել ւ>վ (ա>վ/ վ>վ) անցումը, որի համար, իբրեւ միջանկեալ աստիճան, կարելի է ենթադրել *ով (օվ) օղակը, ինչպէս՝ ստուար (>*ստովար) >ստվար, դիպուած/ <դէպուած/ >(*դիպոված) >դիպված: Հնդ որում՝ ւ>վ անցում տեղի է ունեցել ոչ միայն ուա, այլեւ ուի (հմմտ. առուի>առվի, լեզուի>լեզվի, սուին>սվին), ուս (քույյ>քվի, զինուրր>զինվոր), ուե (քուել>քվեց, հաշուել>հաշվել, կոռուել>կորվել) հնչիւնական զուգորդումների դէպքում: Եթէ նըկատի ունենանք, որ քույյ>քուել բառաձեւերի ելակէտային ձեւն է թիւ, հաշուել, կոռուել ձեւերինը՝ հաշիւ, կորիւ, ապա ակնյայտ կը դառնայ, որ գործել է նոյն զարգացումը, ինչ որ ուա-ի դէպքում: Հիմնահարցի քննութեամբ զբաղուած գրեթէ բոլոր գիտնականներն էլ անդրադարձել են սաւնյ «տեգի», Դունյոյ «Դվինի» եւ տուրնջեան «ցերեկային» բառերին՝ փորձելով, նկատի ունենալով նաեւ այդ բառերի աւանդական, այսինքն՝ տ(ը)վնոյ, Դ(ը)վնոյ, տ(ը)վ(ը)նջեան, արտասանութիւնը, ու-ի հնչոյթա-/հնչիւնական արժէքը բացատրել ը-ի զբաղեցրած դիրքով²⁵: Մեր կարծիքով, սակայն, ը-ի մուտքը այդ բառերի մէջ հետեւանք է վերը ներկայացուած բնոյթի հնչիւնական գործընթացի, այսինքն՝ ձայնորդ ւրադաճայն վ անցման: Սա նաեւ նշանակում է ւ-ը գոնէ Ե. դարում դեռեւս ձայնորդ էր եւ ունէր վ-ից տարբեր հնչիւնական որակ:

Ունենալով երկբարբառային ծագում՝ միանգամայն հաւանական է, որ Ե. դարում է-ն արտաբերուէր և-ից տարբեր կերպ²⁶: Այդ մասին է վկայում նաեւ մաշտոցեան այբուբենում է հնչոյթին առանձին գրանչան յատկացնելը: Դեռեւս նախագրա-

25 ԱՂԱՅԵԱՆ, Է. Բ., 62. աշխ., 316: ՄՈՒՐԱԴԵԱՆ, Հ., 62. աշխ., 236-237:

26 Ըստ Մեյէի եւ ուրիշների՝ է-ն ծագում է հ.-ի.* ai,* և երկրարբառներից (տե՛ս ՄԵՅԷ, Ա., 62. աշխտ., 32):

յին հայերէնում է-ն ենթարկուել էր որոշակի պարզեցման՝ հեռանալով երկբարբառային արտասանութիւնից, բայց այդ պարզեցումը չէր յանգեցրել և-ի հետ նոյնանալու։ Կարելի է ենթադրել, որ գրերի գիւտի շրջանում (գուցէ նաեւ ողջ Ե. դարի ընթացքում) է-ն ունեցել է փակ կամ, ինչպէս անուանում է Հ. Աճառեանը²⁷, «գոց» հնչարտաբերութիւն եւ այդպէս հակադրուել է «բաց» արտաբերութիւն ունեցող և-ին, սակայն ճիշտ չէ նրան [ել] երկբարբառակերպ արտասանութիւն վերագրելը։ Ինչպէս արդէն տեսանք, բոլոր երկբարբառակերպերը եղել են երկդիր, եւ եթէ է-ն նրանցից մէկն էր, ապա միանգամայն իրաւացի է Աճառեանը՝ նշելով, որ այդ դէպքում առնուազն փակ վանկում (սկր, գէս, ծէս, վէս) եւ բառավերջում (րոպէ, մարգարէ, հատանէ «կտրում է», անցանէ «անցնում է», շարժէ «շարժում է», յաստեղէ «աստղից», ի բանէ «խօսից») որեւէ պատճառ չկար այն երկդիր, ասենք՝ եյ ձեւով չներկայացնելու համար։ Այն, որ և լծորդութեան բայերի սահմ. ներկայի եղ. Յ-րդ դէմքում կայ -է վերջը, որի համարժէքը ա լծորդութեան բայերի դէպքում -այ է (հմմտ. ընթանայ «ընթանում է», ցնծայ «ցնծում է»), իսկ ու լծորդութեան բայերի դէպքում -ու (հմմտ. այսնու «ուռչում է», զինու «մորքում է»), դեռեւս և-ի երկբարբառային (կամ երկբարբառակերպ) բնոյթի վկայութիւն չեն։ Զէ²⁸ որ նոյն դիրքում կայ նաեւ ի լծորդութեան բայերի զուտ ձայնաւողական -ի վերջը (հմմտ. Խօսի «խօսում է», ազանի «հագնում է», ծածանի «ծածանում է»):

Եթէ ասուէր, որ է-և տարբերակման հարցում Մաշտոցը հետեւել է յունարէնին (ինչպէս դա նշում է ու-ի գրութեան դէպքում։ հմմտ. օվ)²⁹ դրանք դիտելով, համապատասխանաբար, յունարէնի երկար դիրքութիւնների, թերեւս ընկալուէր, որովհետեւ գիւտի դարաշընում (եւ նրանից շատ դարեր յետոյ էլ) ոչ միայն գաղափար չկար հնչոյթային եւ հնչիւնային տարբերութիւնների մասին, այլեւ յաճախ շփոթւում էին հնչիւնը եւ տառը՝ մէկը գործածելով միւսի փոխարէն։ Հետեւաբար շատ աւելի հեշտ էր հայերէնի և-ի բաց եւ և-ի փակ արտաբերական տարբերութիւնները նոյնացնել (այսինքն

27 Տե՛ս ՀՐԱԶԵՍՑ ԱՃԱՌԵԱՆ, Հայոց գրերը, էջ 574:

28 Տե՛ս Գ. ԶԱՀՈՒԿԵԱՆ, Քերակամական եւ ուղղագրական աշխատութիւնները երմ եւ միջմադարեամ Հայաստանում, Ե., 1955, էջ 125.-Ա. Ն. ՄՊԻՐԱԴԵԱՆ, Յունարան դպրոցը եւ նրա դերը հայերէնի քերակամական տերմինարանութեան ստեղծման գործում, Ե., 1971, էջ 181:

շփոթել) յունարէնի կարծ ε-ի եւ երկար η-ի արտաքերական տարբերութիւնների հետ: Մանաւանդ, որ հայերէնի և-ի եւ է-ի տարբերութիւնը եւս հնչոյթային էր: Այս հնչոյթների հակադրութիւնը, սակայն, գրաբարում ուժեղ չէր: Այդ հակադրութեամբ տարբերակուել են սակաւաթիւ բառեր: Դրանցից են. 1) գէտ/ գիտ/- (<*կու- / *զու- «իմանալ, գիտենալ») ~ գետ (<*կու- «խոնաւացնել, հոսել»), - 2) են (ենն, էին, զէն, յէնն. «ինքնազոյակ անեզ. էակ ըստ ինքնան՝ առաջին եւ հարկաւոր, որոյ եղն եւ գոլն է նոյն²⁹»- այսինքն՝ Տէր, Աստուած) ~ են (բայի սահմ. ներկայ յդն. Յ-րդ դէմքը), - 3) խեր (խեր) «խղճի խայր, խիբ, փորացաւ, խերնայուածք, ոխ, արգելք, հրում»~ խեր (խեր) (<*khet' -*s)k(h)aid(t)-) «խեր, խոժոն (խերել «խփել, խթել, հրել»), - 4) սեր (սիր-ել)- (<*k' ēi-ro- *k' ēi- «պառկել») ~ սեր «սերունդ, ցեղ, սեռ» (<*k' er- «անել, անեցնել, սնել») ~ սեր «կարի սեր»³⁰:

Այս քննութիւնից հետեւում է, որ գրաբարեան ու-ն եւս երկբարբառակերպ էր, իսկ է-ն՝ պարզ ձայնաւոր: Այդպիսով հին գրական հայերէնն ունէր 6 ձայնաւոր՝ ա, ե, է, ի, ո, ը եւ 7 երկբարբառակերպ աւ, եւ, իւ, ու, այ, ոյ, ու: Աւանդականօրէն երկբարբառ համարուածներից այդպիսին է միայն եա-ն (հմմտ. մատեան, սենեակ, վայրկեան): Ուա (զուարթ, լուար «լսեցիր»), ուե (քուել «հաշուել», արուեստ), ուի (սուին, նուիրի «նուիրում է»), ուո (զինուոր), ուէ (նուէր, պատուէր) հնչիւնական յաջորդականութիւնները եղել են եռաբարբառակերպեր: Մեր կողմից որդեգրուած սկզբունքի համաձայն՝ «եռաբարբառ» համարուող եաւ (արդեալք, այգեաւք (=այգիներով), եայ (հրեայք (=հրեաներ), քաւդեայք (=աստղագուշակներ)), իայ (միայն) կապակցութիւնները եռաբարբառակերպեր են: Տերմինային բնորոշման տեսանկիւնից որոշ դժուարութիւն են ներկայացնում ույ (այգւյն, կենդանւոյն

29 Տե՛ս նոր բառգիրք հայկակեամ լեզուի, ԽԱ. I, Ե., 1979, էջ 758:

30 Նշուած հակադրութիւններից, ըստ Էռլեան, լիարժել կարելի է համարել երկուաը՝ գէտ-գետ եւ սէր-սեր հակադրութիւնները: Խեր-խեր հակադրութեան գրչագրական տարբերակներից եւ իմաստային դաշտի ընդհանրութիւնից երեւում է, որ դրանք նախապէս նոյն բառն էին. ըստ ամենային՝ գրութեան տարբերակումը հետեւամք է աւելի ուշ առաջացած իմաստային որոշ տարածչատման: Էն ձեւի՝ որպէս է-ի կիրառական արտայայտութիւններից մէկի առաջացումը պիտի վերագրել եկեղեցուն. հազիւ թէ այդ ձեւը եղած լինէր մինչքրիստոնեական (իմա՝ նախգրաբարեան) հայերէնում:

(=ողջ-ողջ), ուայ (տուայ «տուեցի», լուայք «լսեցիք»), ուաւ (տուաւ «տուեց», հովուաւք (<հովիւ+աւք> «հովիւներով»), ուայ (պատույն, պատույն) Հնչիւնակապակցութիւնները, որոնցից տյ-ն ունի «S+V+S», իսկ ուայ, ուաւ, ուայ-ը ունեն «V+S+V+S» բաղադրութիւնը: Առաջնորդուելով բաղադրիչների Հնչաւորակների պարզ գումարման սկզբունքով, այն է՝ երկու ձայնորդի (= կիսաձայնի) միասնութիւնը մէկ վանկի կազմում համարժէք է մէկ ձայնաւորի, ույ-ը պիտի համարել երկբարբառ, իսկ միւսները՝ եռաբարբառ:

Այսպէս, գրաբարն ունեցել է երկբարբառային ու եռաբարբառային կազմութիւնների հետեւեալ համակարգը.

- 1) երկբարբառ-եա, ոյ.
- 2) երկբարբառակերպ-աւ, իւ, եւ, ու, տ, այ, ոյ.
- 3) եռաբարբառ-ուաւ, ուայ, ուայ.
- 4) եռաբարբառակերպ-եաւ, եայ, իայ:

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Summary

DIPHTHONGAL AND TRIPHTHONGAL FORMS IN CLASSICAL ARMENIAN

VARDAN PETROSYAN

Scholarly monographs and textbooks of Classical Armenian have traditionally considered as diphthongs and triphthongs not only sound sequences of absolute vowel composition (of *ea/bu* type) produced within a syllable structure, but also sequences of vowel + *j(j)* or *w(l)* sonorant composition (e.g. *oj/nj*, *iw/hl*) or combinations of the former and the latter. The present analysis assumes that sonorants can be diphthong constituents only in those languages in which they had/have a vocalic, i.e. syllabic function (e.g. in Sanskrit). No sonorant had a syllabic function in Classical Armenian as it did not tolerate any non-vocalic nuclei: a syllable had at least a weak schwa (*a/n*) vowel. Consequently, vowel+sonorant (V+S, e.g. *aw/wl*, *ew/bu*, *iw/hl*) or sonorant+vowel (S+V, e.g. *wo/ln*) sequences in Classical Armenian should be viewed as *diphthongoids* and not as diphthongs. Similarly, V+V+S sequences (of *eaw/buu* type) should be viewed as *triphthongoids* instead of triphthongs.

To specify the diphthong/triphthong inventory of Classical Armenian, it is essential to define the vowel inventory of the language. Thus, studies of the phonetic value of the single-letter phonemic grapheme *ē/t*; and two-letter phonemic grapheme *ou/nl*, lead to the following conclusions: 1) In relation to the *ē/t* vowel phoneme, H. Acharian's approach should be followed. It states that *ē/t* used to be the *mid-close* counterpart of the *mid-open* vowel phonemes/*u*. This distinction has phonemic value, like in Modern French: cf. *fait* [fe] 'fact' and *fée* [fe] 'fairy'. 2) *nl/ou*, on the contrary, used to be a diphthongoid and for that reason Mashtots probably followed the Greek spelling *ou*. Thus, the oft-repeated opinion that he followed the Greek spelling blindly, merely because

during the creation of the Armenian letters he was immensely influenced by the Greek alphabet, is unacceptable.

One of the most important aspects of the present study is that, alongside putting forth hypotheses on possible phonetic developments, it relies primarily on phonological criteria which are more reliable in the phonological analyses of particularly ancient languages. The above mentioned key approaches suggest that the traditional concepts about the diphthongs and triphthongs in Classical Armenian should be thoroughly reconsidered.